ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>

Հոդված 1.

1. Օրենսգրքի 157[6] հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<Հոդված 157[6]. Շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) աշխատանքների համար ակնհայտ ոչ իրավաչափ թույլտվություններ տրամադրելը կամ շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տրամադրելու սահմանված կարգը խախտելը

Շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) աշխատանքների համար ակնհայտ ոչ իրավաչափ թույլտվություններ տրամադրելը կամ շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տրամադրելու սահմանված կարգը խախտելը պաշտոնատար անձի նկատմամբ առաջացնում է.

- տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով,

- պարտավորություն՝ օրենքի խախտմամբ տրամադրված շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններն անվավեր և առոչինչ ճանաչելու վերաբերյալ,

- պարտավորություն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վարչարարությամբ պատճառված վնասի գույքային կամ դրամական հատուցում վարչական ակտի հասցեատիրոջը՝ հատուցման մասին պահանջը ստանալուց հետո 3 տարվա ընթացքում՝ ամենամսյա վճարումների տեսքով և սահմանված ժամանակացույցի համաձայն:>:

Հոդված 2. Սույն օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: